

յազիրտական ամբիոններին նպաստելու համար պահուում են 3 թռչակաւոր սաներ եւ մի աշխատակից՝ զբաղարանում: Վերջին կիսամեակում պրոֆ. Օրբելին հրաւիրւած է համալսարանում դասուանողելու հայ արեւստի պատմութիւնը:

Բացի այդ, Մեկքոնեան Յանձնաժողովը ձեռնարկել է հանրային մատենադարանի կառուցման համալսարանական թաղամասում: Ծէնքի յատակադիժը կազմել է Ա. Կապ. Ա. Թամանեանը: Ծէնքի առաջին մասը աւարտուելու է այս տարի եւ պարունակելու է մօտ 800.000 գիրք: Այստեղ պէտք է կենտրոնացին ձեռագրերը եւ դիտական ու զեղարեստական հրատարակութիւնները: Ծէնքն ունենալու է մի մեծ ընթերցարան եւ առանձին սենեակներ՝ դիտահետազոտական աշխատանքների համար:

Մեկքոնեան Յանձնաժողովը արտասահմանից հաւաքում է Հայաստանին և կողմնակից վերաբերուող գիտական հրատարակութիւններ: Արդէն հաւաքւած է մօտ 600 հատոր:

Մեկքոնեան Յանձնաժողովը Մարքսիզմի-Լենինիզմի Ինստիտուտի և Խորհրդային Հանրապետարանի հետ միասին կազմել է գիտական-հրատարակչական բաժնետիրական մի ընկերութիւն «Գիտհրատ» անունով եւ պարտասուում է հիմնել սեփական տպարան՝ դիտարարպէս գիտական հրատարակութիւնների համար: Տպարանը գետեղելու է կառուցուող Հանրային Մատենադարանի շէնքում:

(«Ս. Ար.», մարտ):

ՀԱՐՏ. ԲՈՒՆԻԱԹԵԱՆԻ «ԳԱՌՆԻ»-Ն

Երեւանում Մեկքոնեան Ֆոնդի հրատարակութեամբ, լոյս է տեսել ձարտ. Բունիաթեանի «Գառնի» մենագրութիւնը՝ Գառնի աւերակների մասին: Գրքը

քը լոյս է տեսել չքեղ հրատարակութեամբ, բաղմաթիւ նկարներով եւ հայերէն ու ռուսերէն ծանօթութիւններով: Գրքին կցւած է Ֆրանսերէն լեզուով մի վերջարան: Այս գործը ձարտ. Բունիաթեանի բաղմամեայ աշխատանքի արդիւնքն է, որի մէջ մանրամասն ուսումնասիրւած են Գառնի ամբողջի և տաճարի աւերակները: ձարտ. Բունիաթեանն պատմում է, որ աւերակների շրջանի յուշարձանների և մակադրութիւնների հետազայ ուսումնասիրութիւնը խոշոր նիւթ կը արամագրէ հայ ճարտարապետական փուլերի վերլուծութեան և, առհասարակ, հայ ճարտարապետութեան զարգացման աստիճանների բնութման համար: («Ս. Ար.», մարտ):

ՊՐՈՓ. Լ. ՄԵԼԻՔՍԷԹԻԿԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՆՆԵՐԸ

Խմբագրութիւնն ստացել է մասնաւոր տեղեկութիւններ, Թիֆլիսի պետական համալսարանի ուսուցչապետ Լեւոն Մելիքսէթիկի հետեւեալ գիտական աշխատանքների մասին:

1.- Ծուռով լոյս է տեսնելու Մեկքոնեան Ֆոնդի հրատարակութեամբ չորս հատորնոց մի մենագրութիւն՝ «Վրաց Աղբիւրները Հայաստանի և Հայերի մասին», որի առաջին հատորը արդէն մամուլի տակ է, իսկ երկրորդը՝ յանձնրւած է տպագրութեան:

2.- Նոյն Ֆոնդի միջոցով պիտի հրատարակի «Նիւքեր Հայ Գաղբակա-նուքեան համար Վրաստանում» արդէն գրւած-պատրաստ աշխատութիւնը: Հատորին իբրեւ յաւելւած պիտի կցւի՝ «Հաւաքածոյ Հայկական Արձանագրութիւնների ժԲ - ԺԸ դարերի»:

3.- Պատրաստուում է Սայեաթ Նովայի 60 հայերէն երգերի վրացերէն չափաձայ թարգմանութիւնը, որ լոյս է տեսնելու առանձին հատորով եւ պիտի ու-

նենայ յառջարան, բառարան եւ մասնագրական նիւթերի ցանկ:

4.- Տպուում է վրացերէն մի ուսումնասիրութիւն Իոնա Խելաշվիլի ուղեւորութիւնից Սոմխեթի եւ Սայեաթ Նովայի մասին: Խելաշվիլի հաղորդած տեղեկութիւնները Սայեաթ Նովայի մասին զբւերու են մեր աշխատակից Յ. Զաւրեանի յօդածաշարքի մէջ «Վէճ»-ի մօտակայ համարում:

5.- Բացի այդ, Լ. Մելիքէթբեկը դանդաղան պարբերականներում տպել է վրացերէն, ռուսերէն եւ հայերէն լեզուներով զբւերած յօդածներ հայագիտական եւ վրացագիտական նիւթերի մասին:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՔՏԱԹՆԵՐ

Անցեալ տարւայ վերջը, Ռուսաստանում, "Academia" յայտնի հրատարակչականը լոյս է ընծայել «Հայկական Հեքստքներ» գրքի երկրորդ տպագրութիւնը: Հատորը զարգարւած է Մարտիարեանի նկարներով եւ պարունակում է 44 ձեռագր, որոնց ընտրութիւնն ու թարգմանութիւնը կատարել է Յակ. Խաչատրեանը: Հատորին կցւած է Մարիէտա Շահինեանի ընդարձակ յառաջարանը: Պրոֆ. Ն. Պ. Անդրէյեւը գրել է մի վերջարան, ուր համեմատութիւն է անում հայկական եւ արեւելեան ու եւրոպական հեքստքների միջեւ: Տպագրութիւնը մաքուր է եւ հաճելի տպագրութիւն է թողնում:

ԹԱԻՇԷ ԴԻԿՏԱՏՈՐ

1933թ. վերջը Մոսկուայում լոյս է տեսել ռուս գրող Լէոնիդ Գրոսմանի

մէկ վէպը՝ «Թաւշ Դիկաստոր», որ ներկւած է Կոմս Մ. Լորիս-Մելիքեանի կեանքի եւ զործունէութեան վերջին շրջանին, երբ կոմսը, իրրեւ Գերազոյն Դործազիր Յանձնախմբի նախագահ, սպա սրպէս ներքին գործոց նախարար՝ փաստօրէն գլխավորում էր սղջ Ռուսաստանի պետական գործերը: Վէպը կազմւած է խիստ միակողմանի եւ միտումնաւոր. Լորիս-Մելիքեանի հարազատ պատկերը չի սրւած: Նա ներկայացւած է իրրեւ խորամանկ, նենդ, խորդախ մի պալատական, որ շողորթութեամբ ու զանազան դաւերով, գլխավորապէս Ալեքսանդր Բ.-ի սիրուհու (յետոյ կնոջ) միջոցով իրեն է ենթարկել զտոսմեալ ցարի կամքը եւ իր փառասիրական նպատակներն է հետապնդում: Լորիս-Մելիքեանի պետական բարենորոգչական ծրարները պատկերացւած են բացասական գոյներով: Եւ ստացել է մի ծագրանկար կամ պարսուադիր ցարական Ռուսաստանի գարազլուխ ստեղծող պետական գործիչներից մէկի մասին:

ԿԱՐՆՈՅ ԱՇԽԱՐՀ

Ամերիկայի Կարնոյ Հայրենակցական Միութեան նախաձեռնութեամբ պատրաստութեան մէջ է «Կարնոյ Աշխարհ» հատորը, որ պարունակելու է Կարնոյ եւ շրջակայքի պատմութիւնը, բնական, տեղագրական, ազգագրական, տնտեսական, մշակութային վիճակը պատերազմի նախօրեակին: Հատորը պէտք է լինի պատկերազարդ: Այս գործին նիւթերով ու լուսանկարներով օգնել ուղղորդները պէտք է ուղարկեն «Վէճ»-ի խմբագրութեան:

